

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆԱԶՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

N 11

03 ապրիլ 2013թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03/04/2013թ.թիվ 2 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել 03/04/2013թ. թիվ 2 հերթական նիստի օրակարգը՝

1. Աղբահանության վճարի դրույքաչափ սահմանելու մասին :
2. Համայնքային բյուջեում փոփոխություններ կատարելու մասին :
3. Եղեգնաձորի համայնքի բնակիչների կողմից Արփի համայնքի հողերի օգտագործման դիմաց սխալմամբ գանձված գումարի հետ վերադարձման մասին :
4. Համայնքային բյուջեի եռամսյակային հաշվետվությունը ներկայացնելու մասին :
5. Հանքարդյունահանման աշխատանքներ իրականացնելու համար „Մետալոգրես,, ՍՊԸ-ի հետ հողի վարձակալության պայմանագիր կնքելու մասին :
6. Առանց ծնողական խնամքի մնացած Անդրանիկ Գևորգյանին բնակհաշվառման վերցնելու մասին :
7. „Եղեգնաձորի ԲԿՏ,,ԲԲԸ-ի խորհրդի կազմում քաղաքապետարանի ներկայացուցչի թեկնածությունը հաստատելու մասին :
8. Համայնքին պատկանող Արսենյան 4/5 հասցեում գտնվող 18քմ հողատարածքը կառուցապատման իրավունքով Մարտիրոս Կարապետյանին հատկացնելու մասին :
9. Եղեգնաձորի քաղաքապետարանի ներքին աուդիտի գործունեության կանոնակարգին , ռազմավարական և տարեկան ծրագրերին հավանություն տալու մասին :

Կողմ -9

Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼՈՅԱՆ ԱՐՏԱԿ

2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ

3. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ

4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՏԵՄ

5. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

6. ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳԱԳԻԿ

7. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ԱՐԹՈՒՐ

8. ՊՈՂՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

9. ՍՄԲԱՏՅԱՆ ՎՈԼՈՂՅԱ

ԵՂԵԳՆԱԶՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝



ԴԱՐՈՒԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆԱԶՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

03 ապրիլ 2013թ.

N 15

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱՅԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ընդունել համայնքային բյուջեի եռամսյակային հաշվետվությունը և կատարված աշխատանքները գնահատել բավարար:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱԼՈՅԱՆ ԱՐՏԱԿ

2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ

3. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ

4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՏԵՄ

5. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ


6. ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳԱԳԻԿ

7. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ԱՐԹՈՒՐ

8. ՊՈՂՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

9. ՍՄԲԱՏՅԱՆ ՎՈԼՈՂՅԱ

ԵՂԵԳՆԱԶՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ



ԿԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**I-ին եռամսյակի համայնքային բյուջեի կապարողականը ըստ եկամուտների
տեսակների**

	անվանումը	Չափի միավ.	Պլան	փաստացի	%
1	գ/հարկ	հազ.դրամ	4500.0	6730.0	149.5
2	հ/հարկ	հազ.դրամ	1150.0	1149.0	100.0
3	տ/տուրք	հազ.դրամ	812.0	1704.0	209.8
4	ա/տուրք	հազ.դրամ	1150.0	956.0	83.0
5	վ/հող	հազ.դրամ	175.0	110.0	63.5
6	տ/վճար	հազ.դրամ	75.0	204.0	272
7	Ոչ հարկային եկամուտ	հազ.դրամ	1508.0	2072.0	137.4
	ընդամենը	հազ.դրամ	9370.0	12925.0	137.9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

03 ապրիլ 2013թ.

N 16

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ,,ՄԵՏԱՊՐՈԳՐԵՍ,,ՍՊԸ-Ի
ՀԵՏ ՀՈՂԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին „ ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի և
„ Ընդերքի մասին „ ՀՀ օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ կետի 1-ին ենթակետի պահանջներով .

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՛

Տալ համաձայնություն հանքարդյունահանման աշխատանքներ իրականացնելու համար „Մետալրոգրես,,
ՍՊԸ-ի հետ հողի վարձակալության պայմանագիր կնքելու :

Կողմ -2

Դեմ -7

Ձեռնպահ -0

1. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

1. ԱԼՈՅԱՆ ԱՐՏԱԿ

2. ՍՄԲԱՏՅԱՆ ՎՈԼՈՂՅԱՆ

2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ

3. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ

4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՏԵՄ

5. ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳԱԳԻԿ

6. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ԱՐԹՈՒՐ

7. ՊՈՂՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝



ԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆԱԶՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

03 ապրիլ 2013թ.

N 18

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

„ԵՂԵԳՆԱԶՈՐԻ ԲԿՏ„ ԲԲԸ-Ի ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ
ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարավելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 16-րդ կետի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել «Եղեգնաձորի ԲԿՏ» ԲԲԸ-ի խորհրդի կազմում քաղաքապետի տեղակալ Վարդան Ավագյանի թեկնածությունը:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱԼՈՅԱՆ ԱՐՏԱԿ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
3. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՏԵՄ
5. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ
6. ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳԱԳԻԿ
7. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ԱՐԹՈՒՐ
8. ՊՈՂՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ
9. ՍՄԲԱՏՅԱՆ ՎՈԼՈՂՅԱ

ԵՂԵԳՆԱԶՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝  ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

03 ապրիլ 2013թ.

N 19

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՐՍԵՆՅԱՆ 4/5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 18ՔՄ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԿԱՌՈՒՅԱՊԱՏՄԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՄԱՐՏԻՐՈՍ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՀԱՏԿԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 12/04/2001թ. «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն օտարելու և օգտագործման տրամադրելու կարգը հաստատելու մասին» թիվ 286 որոշման 46.2 -րդ կետի ա ենթակետը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն համայնքին պատկանող Արսենյան 4/5 հասցեում գտնվող 18քմ հողատարածքը կառուցապատման իրավունքով հատկացնել Մարտիրոս Կարապետյանին՝ ավտոտնակ կառուցելու նպատակով :
2. Կառուցապատման ժամկետ սահմանել 50 տարի :
3. Վարձավճարի չափ սահմանել հողի կադաստրային գնի 25 % -ի չափով :

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱԼՈՅԱՆ ԱՐՏԱԿ

2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ

3. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ

4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՏԵՄ

5. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

6. ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳԱԳԻԿ


7. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ԱՐԹՈՒՐ

8. ՊՈՂՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

9. ՍՄԲԱՏՅԱՆ ՎՈԼՈՂՅԱ

ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ

ԱՎԱԿԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆԱԶՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

03 ապրիլ 2013թ.

N 20

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԵՂԵԳՆԱԶՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻՆ, ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Ներքին աուղիտի մասին „ ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով
ՀՀ ֆինանսների նախարարի 23.02.2012թ. թիվ 165-Ն որոշումը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Տալ հավանություն Եղեգնաձորի քաղաքապետարանի ներքին աուղիտի գործունեության կանոնակարգին,
ռազմավարական և տարեկան ծրագրերին :

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱԼՈՅԱՆ ԱՐՏԱԿ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
3. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՏԵՄ
5. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ
6. ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳԱԳԻԿ
7. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ԱՐԹՈՒՐ
8. ՊՈՂՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ
9. ՍՄԲԱՏՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ

ԵՂԵԳՆԱԶՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ




ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Վավերացնում եմ
Եղեգնաձորի քաղաքապետ Դ.Հարությունյան


ստորագրություն
<<14>> 03 2013թ.

Հաստատում եմ
Ներքին աուդիտի բաժնի
պետ Ա.Հովհաննիսյան


ստորագրություն
<<14>> 03 2013թ.

Եղեգնաձորի քաղաքապետարանի ներքին աուդիտի ռազմավարական ծրագիր

1. Հիմնական դրույթներ:

Ռազմավարական ծրագիրը ընդգրկում է 2013-2015թ.թ.-ը և ղեկավարվում է կազմակերպության երկարաժամկետ նպատակներով, ներքին աուդիտի ոլորտում սահմանված ռազմավարական զարգացման խնդիրներով: Հանդիսանում է աուդիտի երեք տարվա պլանավորման փաստաթուղթ: Ռազմավարական ծրագրի հիմքում ընկած է կազմակերպության աուդիտի իրականացման անհրաժեշտության գնահատականը, ռիսկերի գնահատումը, նախորդ ժամանակաշրջանում կազմակերպություններում իրականացված ներքին աուդիտի եզրակացությունները, բացահայտված խնդիրները, ներկայացված առաջարկությունները, դրանց գծով իրականացված գործողությունները և դրանց կատարման վերաբերյալ հաշվետվությունները:

2. Ներքին աուդիտի իրավական շրջանակները:

Ներքին աուդիտի իրավական շրջանակները ընդգրկում են քաղաքային ենթակայության ՀՈԱԿ-ները, քաղաքային նշանակության հիսուն տոկասից ավելի պետական բաժնեմաս ունեցող ՓԲԸ-ները:

3. Ներքին աուդիտի առաքելությունը և խնդիրները:

Ներքին աուդիտը աջակցում է կազմակերպությանը հասնել իր նպատակներին, օժանդակելով կազմակերպությունների ղեկավարներին բացահայտելու և գնահատելու և կառավարելու առկա ռիսկերը, գնահատելու ֆինանսական կառավարման, հսկողության համակարգերի արդյունավետությունը, և գործնության համապատասխանությունը տվյալ ոլորտը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նորմատիվ գերատեսչական ակտերին: Գնահատում է տնտեսող, արդյունավետ օգտավետ գործառույթները, կորուստներից, չարաշահումներից, վնասներց ակտիվների ու ռեսուրսների պահպանման հուսալիությունը, առաջադրանքների կատարումը և նպատակների գնահատումը: Իրականացնում է հավաստիացման և խորհրդատվական գործառույթներ:

4. Ռազմավարական ծրագրի կազմման հիմքերը:

Ներքին աուդիտի ռազմավարական ծրագրի կազմման հիմք է հանդիսանում <<Ներքին աուդիտի մասին>> ՀՀ օրենքը, ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ.-ի թիվ 143-Ն որոշումը, ներքին աուդիտի բաժնի կանոնադրությունը: Բաժինը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, ՀՀ օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով, Հայաստանի Հանրապետության կառավարության և վարչապետի որոշումներով, Եղեգնաձորի քաղաքապետարանի որոշումներով և կարգադրություններով, Հայաստանի Հանրապետության ներքին աուդիտորների վարքագծի կանոններով:

5. Աուդիտի ենթարկվող միավորների ցանկը :

Ներքին աուդիտի ենթակա միջավայրը ընդգրկում է քաղաքային ենթակայության <<Մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ներ 3 միավոր, <<Եղեգնաձորի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն>> ՀՈԱԿ 1 միավոր, <<Եղեգնաձորի գեղարվեստի դպրոց>> ՀՈԱԿ 1 միավոր, <<Եղեգնաձորի մարզադպրոց >> ՀՈԱԿ 1 միավոր, <<Եղեգնաձորի քաղաքապետարանի աշխատակազմ>> ՏԿՀ 1 միավոր/կցվում է աուդիտի ենթարկվող միավորների ցանկը աուդիտի կատարման ժամկետների և հաճախականության նշումներով/:

6. Ներքին աուդիտի բաժնի աշխատանքի կազմակերպումը:

Քաղաքապետարանի ներքին աուդիտի բաժինը ունի իր կանոնադրությունը: Բաժինը ղեկավարում է բաժնի պետը: Բաժինը իր գործունեությունը իրականացնում է <<Ներքին աուդիտի մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ Ֆինանսների նախարարի 17.02.2012թ. թիվ 143-Ն հրամանի և Հայաստանի Հանրապետության ներքին աուդիտի մասնագիտական գործնեության ստանդարտներով նախատեսված լիազորություններ: Բաժնի գործունեությունը կառավարում է քաղաքապետը, ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է բաժնի պետը: Բաժինը կազմում է ներքին աուդիտի տարեկան ծրագիրը, կազմակերպում և իրականացնում տարեկան ծրագիրը, կազմում միջանկյալ և տարեկան հաշվետվություններ, ներկայացնում քաղաքապետին և ներքին աուդիտի կոմիտեին, ինչպես նաև մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը տարեկան ամփոփ հաշվետվությունը ներկայացնում լիազոր մարմին:

Ըստ ռիսկերի գնահատման և կազմակերպությունների կառուցվածքային առանձնահատկությունների, միավորի բարդության աստիճանից սահմանվել են աուդիտի իրականացման ժամկետներ, որն ընդգրկված է աուդիտի իրականացման տարեկան ծրագրում: Ստեղծվել է աուդիտի աշխատանքային խումբ, ըստ կազմակերպությունների աուդիտի իրականացման ժամանակացույց, անհրաժեշտության դեպքում ռազմավարական ծրագրում վերանայելով աշխատանքային ռեսուրսների առկա գնահատումը:

Աուդիտի կողմից իրականացվում է կազմակերպությունների գործնեության և ռազմավարական նպատակների վերաբերյալ անհրաժեշտ տվյալների և տեղեկատվության հավաքագրում և դրանց վերլուծում, ռիսկերի հավաստի գնահատման համար:

Ներքին աուդիտի բաժնի գործառույթներից է կազմակերպությունների կառավարչական գործառույթների գնահատումը և բարելավումը, ինչպես նաև դրանց բացակայության դեպքում իրականացնել խորհրդատուի դեր կառավարչական գործընթացների նախագծման, ներդրման գործում, չխախտելով ներքին աուդիտորի անկախության սկզբունքը: Աջակցում է կազմակերպությանը ռիսկերի հայտնաբերման, գնահատման և կառավարման գործընթացներում, գնահատում ներքին հսկողության համակարգի արդյունավետությունը և օգտավետությունը:


Ներքին աուդիտի բաժինը սահմանում է կազմակերպություններում հնարավոր ռիսկերի չափորոշիչները, նրանց հավանականության և ազդեցության գնահատականները, կիրառելով ուղղիչ գործակիցներ, հաշվարկում ռիսկի երկու ցուցանիշ՝ ռիսկի հավանականության ցուցանիշ և ռիսկի ազդեցության ցուցանիշ:

Բաժնի պետը աշխատանքային գործունեության ընթացքում 3 տարվա ռազմավարական ծրագրի շրջանակներում պարբերաբար մասնագիտական վերապատրաստում է անցնում, որը հնարավորություն է տալիս կատարելագործելու ներքին աուդիտի աշխատանքները:

Վավերացնում եմ՝
Եղեգնաձորի քաղաքապետ Դ.Հարությունյան


ստորագրություն
<<14>> 03 2013թ.

Հաստատում եմ՝
Ներքին աուդիտի բաժնի
պետ Ա.Խովհաննիսյան


ստորագրություն
<<14>> 03 2013թ.

Եղեգնաձորի քաղաքապետարանի ներքին աուդիտի 2013 թ.-ի տարեկան ծրագիր

Եղեգնաձորի քաղաքապետարանի ներքին աուդիտի 2013 թ.-ի տարեկան ծրագիրը ընդգրկում է քաղաքային ենթակայության <<Մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ներ 3 միավոր, <<Եղեգնաձորի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն>> ՀՈԱԿ 1 միավոր, <<Եղեգնաձորի գեղարվեստի դպրոց>> ՀՈԱԿ 1 միավոր, <<Եղեգնաձորի մարզադպրոց >> ՀՈԱԿ 1 միավոր, <<Եղեգնաձորի քաղաքապետարանի աշխատակազմ>> ՏԿՀ 1 միավոր, ըստ աուդիտի կատարման ժամկետների և հաճախականության նշումներով /հավելված 1/։ Տարեկան ծրագրով նախատեսվում է իրականացնել.

ա/ համապատասխանության աուդիտ, որով ուսումնասիրվում և գնահատվում է կազմակերպության գործնեության համապատասխանությունը օրենքներին, այլ իրավական ակտերին :

բ/ ֆինանսական աուդիտ, որի նպատակն է գնահատել ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը, նրանց համապատասխանությունը ֆինանսական հաշվետվությունների ստանդարտների կիրառելի հիմունքներին, հարկային և այլ օրենսդրական պահանջներին, հնարավոր խարդախությունների, չարաշահումների բացահայտում:

Յուրաքանչյուր միավոր աուդիտի իրականացման արդյունքում կազմվում է աուդիտի հաշվետվություն, որը հաստատվում է ներքին աուդիտի բաժնի պետի կողմից և տրամադրվում քաղաքապետին ու ներքին աուդիտի կոմիտեին: Այն քննարկվում է, որի վերաբերյալ ընդունվում է որոշում: Ներքին աուդիտի տարեկան կատարողականի վերաբերյալ ներքին աուդիտի բաժնի պետի կողմից կազմվում է ամփոփ հաշվետվություն և մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը ներկայացվում քիազոր մարմին:

Կցվում է աուդիտի իրականացման ժամանակացույցը /հավելված 1/:

Հավելված 1
Եղեգնաձորի քաղաքապետի
11 03 2013թ.-ի թիվ 14 կարգադրության

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

1. ՀՀ Եղեգնաձորի քաղաքապետարանի/այսուհետ՝ Քաղաքապետարան/ ներքին աուդիտի գործունեության կանոնակարգը՝ այսուհետ՝ Կանոնակարգ/ հանդիսանում է Քաղաքապետի, ներքին աուդիտի կոմիտեի և քաղաքապետարանի ներքին աուդիտի բաժնի աշխատանքները սահմանող հիմնական փաստաթուղթ, որով սահմանվում են ներքին աուդիտի նպատակը, լիազորությունները և պարտականությունները: Քաղաքապետարանի ներքին աուդիտի /այսուհետ՝ Աուդիտ/ գործունեությունը իրականացվում է <<Ներքին աուդիտի մասին>> ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 2011թ.-ի օգոստոսի 11-ի թիվ 1233-Ն որոշման, ՀՀ ֆինանսների նախարարի 2011թ.-ի դեկտեմբերի 8-ի թիվ 974-Ն, 2012թ.-ի փետրվարի 17-ի թիվ 143-Ն և փետրվարի 23-ի թիվ 165-Ն հրամանների, ինչպես նաև քաղաքապետարանի կանոնադրության պահանջներին համապատասխան:

2. Աուդիտի համակարգը ներքին աուդիտի իրականացման համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, պահանջների և ներքին աուդիտի մասնակիցների իրավունքների և պարտականությունների ամբողջությունն է: Ներքին աուդիտի են ենթարկվում Քաղաքապետարանի և քաղաքային ենթակայության կազմակերպությունների ֆինանսական կառավարմանը, հսկողությանը առնչվող բոլոր գործառույթները:

3. Աուդիտը իրականացվում է ներքին աուդիտի ստանդարտների, ներքին աուդիտի վարքագծի կանոնների և ներքին աուդիտի սկզբունքներին համապատասխան, աջակցում քաղաքապետարանի ֆինանսական կառավարման և հսկողության համակարգի ապահովմանը:

4. Ներքին աուդիտի համակարգը գործում է քաղաքապետի անմիջական ենթակայությամբ:

5. Աուդիտը իրականացնում է քաղաքապետարանի Ներքին աուդիտի բաժինը/այսուհետ՝ Բաժին/:

6. Մարզպետը ապահովում է քաղաքապետարանում Աուդիտի համակարգի աուկայությունը և գործունեությունը:

7. Աուդիտի ենթարկվող ստորաբաժանումների և ենթակա միավորների անձինք պարտավոր են համագործակցել ներքին աուդիտորների հետ և իրավունք չունեն չբացահայտելու իրենց հայտնի տեղեկությունները կամ մերժելու դրանց տրամադրումը:

8. Քաղաքապետարանում սահմանվում է ներքին աուդիտի կոմիտե/այսուհետ՝ Կոմիտե/:

9. Կոմիտեն քաղաքապետի կողմից սահմանվող և ղեկավարվող կոլեգիալ մարմին է, որը աջակցում է Աուդիտի համակարգի գործունեությանը:

10. Կոմիտեն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են առնվազն ամիսը մեկ անգամ: Արտահերթ նիստ կարող է գումարվել անհրաժեշտության դեպքում Կոմիտեի նախագահի, անդամի, ինչպես նաև քարտուղարի առաջարկությամբ:

11. Կոմիտեի նիստը վարում է Կոմիտեի նախագահը: Կոմիտեի նիստին կարող են հրավիրվել Կոմիտեի օրակարգում ընդգրկված հարցերին առնչվող ու տիրապետող աշխատակիցները և պաշտոնատար անձինք:

12. Կոմիտեն բաց քվեարկությամբ, ծայների պարզ մեծամասնությամբ ընդունում է խորհրդատվական բնույթի որոշումներ:

13. Ներքին աուդիտի բաժնի պետը.

1. Մասնակցում է Կոմիտեի նիստերին քարտուղարի կարգավիճակով՝ առանց քվեարկելու իրավունքի:

2. Ապահովում է Կոմիտեի կազմակերպչական և տեխնիկական աշխատանքները:

14. Կոմիտեի այն անդամը, ով հանդիսանում է այն ստորաբաժանման կամ ենթակա միավորի ղեկավարը, որի գործունեությունը ենթարկվել է աուդիտի և որի արդյունքները քննարկվում են Կոմիտեի նիստում, քննարկվող հարցը որևէ կերպ առնչվում է իրեն, չի կարող մասնակցել որոշում ընդունելու քվեարկությանը:

15. Կոմիտեի նիստերը անցկացվում են հաստատված օրակարգով, որը ներկայացվում է Կոմիտեի անդամներին քննարկումից առնվազն 3 աշխատանքային օր առաջ:

16. Կոմիտեի նիստերը արձանագրվում են, որը ապահովում է Կոմիտեի քարտուղարը և 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրվում նախագահողի կողմից: Արձանագրությունները պահվում են ներքին աուդիտի բաժնում, որի կրկնօրինակները տրամադրվում են Կոմիտեի անդամներին, քաղվածքը՝ այն պաշտոնատար անձին, ում գործունեությանն է առնչվում Կոմիտեի որոշումը:

17. Կոմիտեի օրակարգը և արձանագրությունը տեղադրվում է քաղաքապետարանի պաշտոնական կայքում:

18. Ռազմավարական, տարեկան ծրագրերի և դրանց փոփոխությունների նախագծերը, քննարկվում են կազմակերպության ղեկավարի ու ներքին աուդիտի կոմիտեի նիստում, որը հաստատում է ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը և վավերացվում կազմակերպության ղեկավարի ստորագրությամբ: Կազմակերպության ղեկավարը և ներքին աուդիտի կոմիտեն քննարկում են ներքին աուդիտի հաշվետվությունը և ընդունում որոշում:

19. Կազմակերպության ներքին աուդիտի ռազմավարական և տարեկան ծրագրերը հաստատվում են մինչև տվյալ տարվա հունվարի 1-ը:

20. Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը պատրաստում և կազմակերպության ղեկավարի միջոցով մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 1-ը լիազոր մարմին է ներկայացնում նախորդող տարվա ամփոփ հաշվետվությունը:

21. Քաղաքապետը հաստատում է ներքին աուդիտի կանոնակարգը, սահմանում ներքին աուդիտի Կոմիտե, ապահովում ներքին աուդիտի համակարգի աուկայությունը և գործունեությունը, նախաձեռնում է խորհրդատվական ծառայությունների աուդիտ, սահմանում նրա խնդիրները և շրջանակը, իրականացնում ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

2. Ներքին աուդիտի գործունեության նպատակները

1. Ներքին աուդիտը հանդիսանում է անկախ, օբյեկտիվ հավաստիացման և խորհրդատվական գործառույթ, որն ուղղված է կազմակերպության գործունեության արդյունքի մեծացմանը և բարելավմանը: Այն աջակցում է քաղաքապետարանին հասնել իր նպատակներին՝ ռիսկերի կառավարման, հսկողության ու կառավարչական գործընթացների համակարգված և կանոնակարգված գնահատման ու բարելավման միջոցով:

Ներքին աուդիտն իրականացվում է ներքին աուդիտի ռազմավարական և տարեկան ծրագրերի հիման վրա՝ քաղաքապետին հավաստիացման կամ խորհրդատվական ծառայություններ մատուցելու միջոցով:

2. Քաղաքապետին, ներքին աուդիտի կոմիտեին հավաստիացում, որ քաղաքապետարանի ստորաբաժանումները, քաղաքային ենթակայության կազմակերպությունների ղեկավարները, այլ պաշտոնատար անձինք պատշաճորեն կատարում են ՀՀ օրենսդրությամբ իրեց վերապահված պարտականությունները, օժանդակում քաղաքապետին բարելավելու քաղաքապետարանի, համայնքային ենթակայության կազմակերպությունների համակարգերը և ծառայությունները, նվազեցնել խարոխիության, վատնումների և այլ չարաշահումների դեպքեր տեղի ունենալու հավանականությունը:

3. Ներքին աուդիտի բաժնի լիազորությունները

1. Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի և ներքին աուդիտորների համար հասանելի են քաղաքապետարանի և համայնքային ենթակայության կազմակերպությունների գործունեության վերաբերյալ ամբողջ, այդ թվում՝ գաղտնի տեղեկատվությունը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված գաղտնի տվյալների հասանելիության կարգի, և բոլոր գրառումները, այդ թվում՝ էլեկտրոնային, որոնք անհրաժեշտ են աուդիտի իրականացման համար:

2. Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը և ներքին աուդիտորները իրավունք ունեն աջակցություն ստանալու այն միավորների ղեկավարներից և աշխատակիցներից, որտեղ իրականացվում է աուդիտը. պատասխանատու աշխատակիցներից պահանջելու աուդիտի համար անհրաժեշտ որևէ տվյալ:

3. Ներքին աուդիտի բաժնի պետն օգտվում է նաև հետևյալ իրավունքներից՝ զեկուցում է քաղաքապետին աուդիտի իրականացման խոչընդոտների և խնդիրների վերաբերյալ, առաջարկում է քաղաքապետին՝ փորձագետ նշանակել, եթե ներքին աուդիտի իրականացման համար պահանջվում են հատուկ գիտելիքներ ու հմտություններ, համագործակցում է ներքին աուդիտի կոմիտեի և նրա անդամների հետ, մասնակցում է նրանց խորհրդակցություններին, կատարում իր լիազորություններից բխող այլ գործառույթներ:

4. Ներքին աուդիտի բաժնի պարտականությունները

1. Ներքին աուդիտի բաժնի պետը և ներքին աուդիտորներն օրենքով նախատեսված լիազորություններ իրականացնելիս պարտավոր են՝

1) հետևել ներքին աուդիտի ստանդարտներին, ներքին աուդիտորների վարքագծի կանոններին, ներքին աուդիտի կանոնակարգին և լիազոր մարմնի հաստատած ներքին աուդիտի մեթոդաբանությանը.

2) չիրապարակել և չտրամադրել գործունեության ընթացքում կամ արդյունքում իրենց հայտնի դարձած տեղեկությունները՝ բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի.

3) գիտակցաբար չմասնակցել անօրինական գործողությունների և կատարել աշխատանքներ, որոնք վարկաբեկում են ներքին աուդիտորի մասնագիտությունը և տվյալ կազմակերպությունը:

2. Ներքին աուդիտի բաժնի պետը պատասխանատու է ներքին աուդիտի ստորաբաժանման ընդհանուր գործունեության համար, և պարտավոր է պատրաստել և քաղաքապետին ու ներքին աուդիտի կոմիտեին ներկայացնել ներքին աուդիտի կանոնակարգի նախագիծը, ներքին աուդիտի ռազմավարական և տարեկան ծրագրերը. ներքին աուդիտորներին՝ ըստ նրանց գիտելիքների և հմտությունների, բաժանել իրականացման ենթակա աուդիտորական առաջադրանքները, կազմել և քաղաքապետին ու ներքին աուդիտի կոմիտեին ներկայացնել ներքին աուդիտի տարեկան հաշվետվությունը. հետևել ներքին աուդիտի տարեկան ծրագրի կատարմանը և ներքին աուդիտի մեթոդաբանության իրականացմանը, անհրաժեշտության դեպքում, խորհրդակցելով լիազոր մարմնի հետ, մշակել առանձին մեթոդաբանություն ներքին աուդիտի ստորաբաժանման գործունեության համար, ներքին աուդիտի ստորաբաժանման գործունեության ընթացիկ ուսումնասիրությունների՝ ներքին գնահատումների միջոցով իրականացնել աուդիտի որակի երաշխավորման ծրագիր՝ անհրաժեշտության դեպքում ներգրավելով նաև արտաքին խորհրդատուների:

3. Ներքին աուդիտի բաժնի պետը հաշվետու է քաղաքապետին և ներքին աուդիտի կոմիտեին ու վերջիններիս է ներկայացնում հաշվետվություններ, այդ թվում՝

1) աուդիտի արդյունքների և արձանագրված խնդիրների, արված առաջարկությունների և կազմակերպության գործունեությունը բարելավելու նպատակով ձեռնարկված գործողությունների մասին.

2) ներքին աուդիտի տարեկան գործունեության ծրագրի իրականացման մասին.

3) ներքին աուդիտի իրականացման համար օգտագործված և անհրաժեշտ ռեսուրսների մասին.

4) ներքին աուդիտի բաժնի պետի և ներքին աուդիտորների առջև ծառացած սահմանափակումների բոլոր դեպքերի մասին:

4. Եթե բացահայտվում են կեղծիքի նշաններ, ապա ներքին աուդիտորներն այդ մասին տեղեկացնում են ներքին աուդիտի բաժնի պետին, որը տեղեկացնում է քաղաքապետին և ներքին աուդիտի կոմիտեին:

5. Ներքին աուդիտորները չեն կարող հավաստիացման աուդիտ իրականացնել այնպիսի գործունեության կամ միավորների մասով, որոնց նրանք վերջին մեկ տարվա ընթացքում մատուցել են խորհրդատվական ծառայություններ կամ որոնց կազմում աշխատել են:

6. Ներքին աուդիտի բաժնի պետը և ներքին աուդիտորները, բացի ներքին աուդիտին առնչվող աշխատանքներից, քաղաքապետարանում այլ գործառույթներ և աշխատանքներ իրականացնելու իրավունք չունեն:

5. Ներքին աուդիտի դիրքը

Ներքին աուդիտի դիրքը համակարգում ներառում է.

1. Հսկողության գործընթացների, ռիսկերի գնահատման, կառավարչական գործընթացների արդյունավետության գնահատում:

2. Գնահատման արդյունքում հայտնաբերված թերությունների և բացթողումների վերացման նպատակով քաղաքապետին համապատասխան առաջարկությունների ներկայացում:

3. Քաղաքապետին խորհրդատվական ծառայությունների մատուցում:

4. Հանդիսանում է հնարավոր խարդախությունների և սխալների կանխարգելման գործոն:

5. Հանդիսանում է քաղաքապետարանի ստորաբաժանումների և համայնքային ենթակայության կազմակերպությունների ղեկավարների զգոնության գործոն:

6. Ներքին աուդիտի շրջանակը

Ներքին աուդիտը ընդգրկում է քաղաքապետարանի և համայնքային ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպությունների, հիսուն տոկոսից ավելի պետական մասնակցությամբ ՓԲԸ-ների գործունեությանն առընչվող բոլոր գործառույթները և գործունեության բոլոր արդյունքները, այն է՝ ներքին հսկողության ողջ համակարգը, ներառյալ բոլոր գործառնությունները, ռեսուրսները, ծառայությունները, գործընթացները, ծրագրերը և այլ իրավահարաբերություններից առաջացող խնդիրներ:

Աուդիտի բաժինը պատասխանատու է քաղաքապետարանի և համայնքային ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպությունների, հիսուն տոկոսից ավելի պետական մասնակցությամբ ՓԲԸ-ների ներքին աուդիտի իրականացման համար:

Ներքին աուդիտը իրականացվում է ներքին աուդիտի կանոնակարգի դրույթներին համապատասխան, որը վերահսկվում է Աուդիտի բաժնի պետի կողմից:

Ներքին աուդիտը չի հանդիսանում քաղաքապետարանի կառավարչական գործընթացի մաս կամ ռիսկերի կառավարման համար պատասխանատու: Կառավարչական գործընթացի, ռիսկերի կառավարման, ներքին հսկողության համակարգի համար պատասխանատվությունը, ինչպես նաև խարդախության կանխումը, բացահայտումը և ուղղորդումը ամբողջովին հանդիսանում է քաղաքապետի և Կոմիտեի պատասխանատվությունը, ովքեր պարտավոր են ապահովել աշխատանքների և գործընթացների պատշաճ իրականացումը: Աուդիտի բաժինը չի կրում գործառնական բնույթի որևէ պատասխանատվություն: Քաղաքապետը և Կոմիտեն իրավունք ունեն ընդունել Աուդիտի բաժնի եզրակացությունները և կատարել տրված առաջարկությունները կամ, հակառակ դեպքում ընդունել այն ռիսկերը, որոնք բխում են դրանց չկատարումից:

Աուդիտի աշխատանքներում կարող են ընդգրկվել հետևյալ գործողությունները.

1. Նշանակալի ռիսկերի սահմանում, գնահատում, ռիսկերի կառավարման համակարգերի բարեփոխման նպատակով, ռիսկերը չեզոքացնող հսկողության

գործընթացների գնահատում, հսկողության արդյունավետ, օգտավետ գործընթացների և շարունակական բարեփոխումների խրախուսում:

2. Ֆինանսական և գործառնական տեղեկատվության հավաստիություն և ուսալիությունն ապահովող ընթացակարգերի գնահատում, հսկողության համակարգի բարեփոխումների առաջարկում:

3. Ներքին աուդիտը աջակցում է Քաղաքապետին առկա ռիսկերը բացահայտելու և գնահատելու միջոցով: Գնահատում է ֆինանսական կառավարման, հսկողության համակարգի արդյունավետությունը և նրանց համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, քաղաքապետարանին առնչվող այլ պայմաններին/պայմանագրային, գերատեսչական նորմատիվ ակտերին և այլն/, ինչպես նաև գնահատում տնտեսող, արդյունավետ և օգտավետ գործառնությունների վստահելիություն և ամբողջականություն, արժեքների կորուստներից, չարաշահումներից և վնասներից, ինչպես նաև ակտիվների, ռեսուրսների պահպանման հուսալիությունը:

4. Ներքին աուդիտը որոշակի աուդիտորական առաջադրանքների ապահովմանն ուղղված հավաստիացման կամ խորհրդատվական ծառայությունների մատուցման միջոցով իրականացնում է ապացույցների օբյեկտիվ գնահատում:

Հավաստիացման ծառայությունների համար իրականացվող աուդիտի խնդիրները և շրջանակը սահմանվում են աուդիտորական առաջադրանքով, որը ընդգրկում է ռեսուլյալ փուլերը. պլանավորում, փաստացի գնահատումների իրականացում, հաշվետվություն, հետագա գործողություններ, վերստուգում՝ առաջարկությունների կատարմանը հետևելու նպատակով:

Հավաստիացման աուդիտը իրականացվում է համապատասխանության աուդիտի կամ կատարողականի աուդիտի և/կամ/երկուսի համակցությամբ:

5. Խորհրդատվական ծառայությունների աուդիտի առաջադրանքը բաղկացած է խորհրդատվության, կարծիքի ներկայացման ուսուցման և այլ բաղադրիչներից, որը ուղղված է ռիսկերի կառավարման և հսկման գործընթացի բարելավմանը:

7. Ներքին աուդիտի իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի, աշխատակազմի և գույքի հետ կապված հարցեր

1. Աուդիտի կատարման համար Բաժնի պետը և աուդիտորները օգտվում են իրավական ակտերով սահմանված իրենց լիազորություններից:

Ներքին աուդիտի ռազմավարական և տարեկան ծրագրերի կազմման համար քաղաքապետարանի աուդիտի միջավայրի բոլոր միավորները Աուդիտի բաժին են ներկայացնում 2013 թ.ի համար իրենց կողմից կազմված ռիսկերի գնահատման տեղեկագիրը/կից ձև թիվ 1/, որը ներկայացվում է ներքին աուդիտի կանոնակարգը հաստատելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ հաջորդ տարիների համար մինչև տվյալ տարվա նոյեմբերի 1-ը:

2. Աուդիտի բաժնի պետը աուդիտի փաստաթղթերի հասանելիության նկատմամբ իրականացնում է հսկողություն:

3. Աուդիտի բաժնի պետը ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան մշակում է աուդիտին առնչվող փաստաթղթերի հավաքագրման, օգտագործման, պահպանման, արխիվացման, այդ փաստաթղթերը ներքին և արտաքին կողմերին տրամադրման կարգը:

4. Աուդիտի բաժնի աշխատակազմի գույքի տրամադրման հետ կապված հարցերը քննարկվում են և լուծվում սահմանված կարգով Բաժնի պետի ներկայացմամբ: